ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԱՔ-ՀԲՄԱՇՁԲ-21/1

ք. Արմավիր « 09 » Հուլիս 2021թ.

Արմավիրի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Դ. Խուդաթյանի, որը գործում է Արմավիրի համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՇԻՆՊԼՅՈՒՍ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Տիգրան Նազարյանի, որը գործում է «ՇԻՆՊԼՅՈՒՍ» ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **Արմավիր քաղաքի Արարատյան փողոցի, Աբովյան փողոցի՝ Արարատյան փողոց-Հանրապետության հրապարակի հատվածի հիմնանորոգման աշխատանքները** (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ **150 օրացուցային օր:**

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 75 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով

(գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **209000000 (երկու հարյուր ինը միլիոն)** ՀՀ դրամ, որից **34833333,33 (երեսունչորս միլիոն ութ հարյուր երեսուներեք հազար երեք հարյուր երեսուներեք ամբողջ երեսուներեք հարյուրերորդական)** ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[31] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի

---

[31] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է սահմանված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*

համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի

կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում են երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Արմավիրի համայնքապետարան	«ՇԻՆՊԼՅՈՒՍ» ՍՊԸ
Ք. Արմավիր, Հանրապետության 32	Ք. Երևան, Աշտարակի խճ. 47/18
ՀՀ Ֆինանսների նախարարություն	«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 900332371039	Հ/Հ՝ 1570058941400100
ՀՎՀՀ՝ 04401882	ՀՎՀՀ՝ 00891777
Համայնքի ղեկավար՝	Տնօրեն՝ Տ. Նազարյան
Դ. Խուդաթյան----------	Տ. Նազարյան----------
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված թիվ 1
« 09 » Հուլիս 2021թ. կնքված
ԱՔ-ՀԲՄԱՇՁԲ-21/1 ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

ԱՐՄԱՎԻՐ ՔԱՂԱՔԻ ԱՐԱՐԱՏՅԱՆ ՓՈՂՈՑԻ, ԱԲՈՎՅԱՆ ՓՈՂՈՑԻ՝ ԱՐԱՐԱՏՅԱՆ ՓՈՂՈՑ-ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԻ ՀԱՏՎԱԾԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

NN	գնի հիմք	Աշխատանքի նկարագիրը	Չ/մ	Քանակ	Միավ. գինը հազար դրամ	Ընդհանուր արժեքը հազար դրամ
1	2	3	4	5	6	7
		Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի Արարատյան փողոցի երթևեկելի մասի հիմնանորոգում				
		<u>քանդման աշխատանքներ</u>				
1	27-36	բազալտե եզրաքարերի ապամոնտաժում ձեռքով /վերադարձնելով սեփականատիրոջը/	մ	160,0	0,6697	107,147
2	27-36	բազալտե եզրաքարերի ապամոնտաժում բետոնե հիմքի հետ միասին վերաշարելու համար	մ	210,0	0,6697	140,631
3	շուկա	ա/բետոնե ծածկույթի ֆրեզերում 50մմ հաստ./վերադարձնելով սեփականատիրոջը/	մ^2	16320,0	0,4685	7646,056
4	1-1551	բնահողի քանդում մեխանիզմով մետաղական խողովակների հատվածներում	1000 մ^3	0,108	340,4958	36,774
5	1-1635	բնահողի հետլիցք մեխանիզմով	1000 մ^3	0,097	52,2500	5,068
6	1-1592	ավելորդ բնահողի բարձում ա/ինքնաթափին էքսկավատրով	1000մ^3	0,0108	159,4109	1,722
7	Գ-130-3	ավելորդ բնահողի տեղափոխում ավտո-ինքնաթափով 3կմ հեռ.	տն	16,2	0,4180	6,772
8	22-93 գ-0,4	Φ273մմ տրամագծով պողպատե խողովակների ապամոնտաժում /վերադարձնելով սեփականատիրոջը/	գծմ	135,0	0,5721	77,239
9	23-227	ապամոնտաժված պողպատե խողովակների բարձում ա/ինքնաթափին ձեռքով	տն	6,2	0,2177	1,350
10	Գ-130-1	ապամոնտաժված պողպատե խողովակների տեղափոխում ավտո-ինքնաթափով 1կմ	տն	6,2	0,2090	1,296
11	23-227	քանդված բազալտե եզրաքարերի բարձում ա/ինքնաթափին ձեռքով	տն	23,80	0,2177	5,181
12	Գ-130-1	քանդված բազալտե եզրաքարերի տեղափոխում ավտո-ինքնաթափով 1կմ հեռ.հանձնելով պատվիրատուին	տն	23,80	0,2090	4,974
13	1-1592	քանդված ա/բետոնի բարձում ա/ինքնաթափին էքսկավատրով	1000մ^3	0,816	155,8792	127,197
14	Գ-130-1	քանդված ա/բետոնի տեղափոխում ավտո-ինքնաթափով 1կմ հեռ.հեռ./հանձնելով պատվիրատուին/	տն	1632,0	0,2073	338,246
15	1-1592	շին աղբի բարձում ա/ինքնաթափին էքսկավատրով	1000մ^3	0,038	155,8792	5,923

16	Գ-130-3	շին աղբի տեղափոխում ավտո-ինքնաթափով 3կմ հեռ.	տն	68,4	0,4180	28,591
		Ընդամենը				**8534,167**
		Տեսակարար կշիռ				**4,900**
		կառուցման աշխատանքներ				
1	11-5	կոպիճա-ավազային հիմք h=10սմ եզրաքարերի հիմքի տակ	մ³	18,00	3,4241	61,634
2	27-87	նոր բազալտե եզրաքարերի տեղադրում բետոնե հիմքի վրա /300x150մմ /	100 գծմ	1,60	973,9835	1558,374
3	27-87	հին բազալտե եզրաքարերի վերաշարում բետոնե հիմքի վրա /300x150մմ /	100 գծմ	2,10	422,0581	886,322
4	16-11	բազալտե եզրաքարերի ուղղում	100 գծմ	2,50	259,7295	649,324
5	27-22-1	Խճի նախաշերտ /իջվածքների տեղամասերում/ 15-20 ֆրակցիայի	մ³	18,00	7,3394	132,109
6	27-22-1	խճա- ավազային նախաշերտի իրականացում 80մմ /135մ2/եզրաքարերի թիկունքային մասում	մ³	10,80	6,2961	67,998
7	16-82	եզրաքարերի թիկունքային հատվածում ասֆալտաբետոնե ծածկույթի իրականացում ,,Դ,, տիպի ա/բետոնե ծածկույթով 30մմ հաստ,	100մ²	1,35	239,2179	322,944
8	22-93	պողպատե նոր խողովակների մոնտաժում Φ273*5մմ	գծմ	135,0	24,6742	3331,016
9	23-1	խողովակների հիմնատակի կառուցում ավազակոպիճով 100մմ	մ³	10,8	3,4224	36,962
10	22-79	պողպատե խողովակի ջրամեկուսացում բիտումային մածիկով 2 անգամ	100մ²	1,16	95,0950	110,310
11	շուկա	առուների մաքրում , նորոգում	գծմ	1100,0	0,3570	392,746
12	16-51	փոսային նորոգման խճային հիմք 80մմ /740մ2/	մ³	59,20	7,3411	434,595
13	16-4	փոսային նորոգում «Բ» տիպի մանրահատիկ ասֆալտաբետոնե ծածկույթով /մինչև 5մ2 / 60մմ հաստ.	100մ²	7,40	692,3125	5123,113
14	16-4	փոսային նորոգում «Բ» տիպի մանրահատիկ ասֆալտաբետոնե ծածկույթով /մինչև 5մ2 / միջինը 40մմ հաստ.	100մ²	14,48	461,5417	6683,123
15	23-109 գ-0,5	Հավաքովի ե/բ դիտահորերի կափարիչների ապամոնտաժում /27հատ/	մ³	7,8	19,4805	151,948
16	շուկա	Հավաքովի ե/բ դիտահորերի նորոգում	հատ	22	12,8570	282,854
17	23-109	Հավաքովի ե/բ դիտահորերի կափարիչների տեղադրում օգտագործելով ապամոնտաժվածը /22հատ/	մ³	6,34	24,2092	153,486
18	23-109	Հավաքովի ե/բ նոր դիտահորերի կափարիչների տեղադրում 1200x1200մմ/5հատ/	մ³	1,44	24,2092	34,861
19	Շուկա	Հավաքովի ե/բ կափարիչի արժեքը 1200x1200, թուջե մտոցի հետ	հատ	5	88,3077	441,539
20	27-251 63-1	ֆրեզերված մակերեսի մաքրում,մշակում բիտումային մածիկով /0,6կգ 1 մ2-ու համար /16320մ2 /	տն	9,792	218,1438	2136,064
21	27-28	հարթեցնող ծակոտկեն ասֆալտաբետոնե շերտ 30մմ միջին հաստ	տն	294,00	31,1671	9163,135
22	27-164-2 27-165-2	«Բ» տիպի մանրահատիկ ա/բետոնե ծածկույթի իրականացում խճային հիմքի վրայից/հաստ.-50մմ	100մ²	163,20	398,6849	65065,378

		Ընդամենը				**97219,833**
		Տեսակարար կշիռ				**55,820**
		Կահավորում				
1	27-180	Ճանապարհային նշանների տեղադրում	հատ	48	22,3438	1072,504
2	1-961	բնահողի քանդում նշանների հիմքերի տակ	մ³	4,8	3,5530	17,054
3	1-968	ավելորդ բնահողի բարձում ա/ինքնաթափին ձեռքով	մ³	4,8	0,3658	1,756
4	Գ-130-3	ավելորդ բնահողի տեղափոխում ավտո-ինքնաթափով 3կմ հեռ.	տն	7,2	0,4703	3,386
5	6-2	բետոնե հիմքերի կառուցում հենասյան տակ B 15 մ.բ.	մ³	4,8	45,5794	218,781
6	9-33	պողպատե խողովակի մոնտաժում Φ57x4	տն	0,8417	26,1209	21,986
7	շուկա	պողպատե խողովակի արժեքը Φ57x4 մմ	մ	161,0	2,7571	443,886
8	15-614	պողպատե խողովակի յուղաներկում 2 անգամ	100մ²	0,29	16,0233	4,647
9	27-248	փողոցի երթևեկելի մասի գծանշում /ճանապարհի բաժանարար,0.1մ լայնությամբ որակյալ գծանշման ներկով 2 շերտ 283մ2/	1կմ	2,83	281,6275	797,006
10	27-247	ճանապարհային գծանշում 0.4մ լայնությամբ /որակյալ գծանշման ներկով 2 շերտ /298մ2/	1կմ	0,745	276,0542	205,660
		Ընդամենը			0,0000	**2786,667**
		Տեսակարար կշիռ				**1,600**
		Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի Աբովյան փողոցի Արարատյան-Հանրապետության հրապարակի հատվածի երթևեկելի մասի հիմնանորոգում				
		քանդման աշխատանքներ				
1	27-36	բազալտե եզրաքարերի ապամոնտաժում ձեռքով /վերադարձնելով սեփականատիրոջը/	մ	187,0	0,6836	127,834
2	27-36	բազալտե եզրաքարերի ապամոնտաժում բետոնե հիմքի հետ միասին վերաշարելու համար	մ	150,0	0,6836	102,541
3	շուկա	ա/բետոնե ծածկույթի ֆրեզերում 50մմ հաստ./վերադարձնելով սեփականատիրոջը/	մ²	8735,0	0,4772	4168,488
4	5-111 գ-0,5	մայթերի ծածկույթի բետոնե սալիկների ապամոնտաժում	մ²	10,0	0,1592	1,592
5	1-1551	բնահողի քանդում մեխանիզմով մետաղական խողովակների հատվածներում	1000 մ³	0,120	347,0271	41,643
6	1-1635	բնահողի հետլիցք մեխանիզմով	1000 մ³	0,108	52,2500	5,643
7	1-1592	ավելորդ բնահողի բարձում ա/ինքնաթափին էքսկավատրով	1000մ³	0,012	158,4917	1,902
8	Գ-130-3	ավելորդ բնահողի տեղափոխում ավտո-ինքնաթափով 3կմ հեռ.	տն	18,000	0,4258	7,665
9	22-93 գ-0,4	Φ273մմ տրամագծով պողպատե խողովակների ապամոնտաժում /վերադարձնելով սեփականատիրոջը/	գծմ	126,0	0,5861	73,845

10	23-227	ապամոնտաժված պողպատե խողովակների բարձում ա/ինքնաթափին ձեռքով	տն	6,90	0,2264	1,562
11	Գ-130-1	ապամոնտաժված պողպատե խողովակների տեղափոխում ավտո-ինքնաթափով 1կմ	տն	6,90	0,2090	1,442
12	23-227	քանդված բազալտե եզրաքարերի բարձում ա/ինքնաթափին ձեռքով	տն	21,30	0,2264	4,823
13	Գ-130-1	քանդված բազալտե եզրաքարերի տեղափոխում ավտո-ինքնաթափով 1կմ հեռ.հանձնելով պատվիրատուին	տն	21,30	0,2090	4,452
14	1-1592	քանդված ա/բետոնի բարձում ա/ինքնաթափին էքսկավատրով	1000մ³	0,4368	156,7500	68,468
15	Գ-130-1	քանդված ա/բետոնի տեղափոխում ավտո-ինքնաթափով 1կմ հեռ.	տն	873,5	0,2090	182,562
16	1-1592	շին աղբի բարձում ա/ինքնաթափին էքսկավատրով	1000մ³	0,0324	156,7500	5,079
17	Գ-130-3	շին աղբի տեղափոխում ավտո-ինքնաթափով 3կմ հեռ.	տն	58,3	0,4267	24,877
		Ընդամենը				**4824,417**
		Տեսակարար կշիռ				**2,770**
		կառուցման աշխատանքներ				
1	11-5	կոպիճա-ավազային հիմք h=10սմ եզրաքարերի հիմքի տակ	մ³	16,20	3,4224	55,442
2	27-87	նոր բազալտե եզրաքարերի տեղադրում բետոնե հիմքի վրա /300x150մմ /	100 գծմ	1,87	973,9400	1821,268
3	27-87	բազալտե եզրաքարերի տեղադրում բետոնե հիմքի վրա /450x150մմ /	100 գծմ	0,82	1233,7096	1011,642
4	27-87	հին բազալտե եզրաքարերի վերաշարում բետոնե հիմքի վրա /300x150մմ /	100 գծմ	1,80	422,0581	759,705
5	16-11	բազալտե եզրաքարերի ուղղում	100 գծմ	2,20	259,7260	571,397
6	27-22-1	Խճի նախաշերտ /իջվածքների տեղամասերում/ 15-20 ֆրակցիայի	մ³	6,00	7,3376	44,026
7	27-22-1	խճա- ավազային նախաշերտի իրականացում 80մմ /118,5մ2/եզրաքարերի թիկունքային մասում	մ³	9,48	6,2700	59,440
8	16-82	եզրաքարերի թիկունքային հատվածում ասֆալտաբետոնե ծածկույթի իրականացում ,,Դ,, տիպի ա/բետոնե ծածկույթով 30մմ հաստ,	100մ²	1,185	239,3050	283,576
9	5-111	մայթերի ծածկույթի իրականացում գունավոր բետոնե սալիկներով 40մմ հաստ.գոյություն ունեցող ավազե նախաշերտի վրա	մ²	10,0	5,8442	58,442
10	22-93	պողպատե նոր խողովակների մոնտաժում Φ273*5մմ	գծմ	126,0	24,6777	3109,387
11	23-1	խողովակների հիմնատակի կառուցում ավազակոպիճով 100մմ	մ³	8,0	3,4189	27,351
12	22-79	պողպատե խողովակի ջրամեկուսացում բիտումային մածիկով 2 անգամ	100մ²	1,08	95,0950	102,703
13	շուկա	առուների մաքրում , նորոգում	գծմ	1120,0	0,3597	402,813
14	16-51	փոսային նորոգման խճային հիմք 80մմ /450մ2/	մ³	36,00	7,3376	264,155

15	16-4	փոսային նորոգում «Բ» տիպի մանրահատիկ ասֆալտաբետոնե ծածկույթով /մինչև 5մ2 / 60մմ հաստ.	100մ^2	4,50	692,3038	3115,367
16	16-4	փոսային նորոգում «Բ» տիպի մանրահատիկ ասֆալտաբետոնե ծածկույթով /մինչև 5մ2 / միջինը 40մմ հաստ.	100մ^2	8,60	461,5330	3969,183
17	23-109 գ-0,5	Հավաքովի ե/բ դիտահորերի կափարիչների ապամոնտաժում /44հատ/	մ^3	12,7	19,4805	247,403
18	շուկա	Հավաքովի ե/բ դիտահորերի նորոգում	հատ	37	12,8561	475,676
19	23-109	Հավաքովի ե/բ դիտահորերի կափարիչների տեղադրում օգտագործելով ապամոնտաժվածը /37հատ/	մ^3	10,66	24,2092	258,070
20	23-109	Հավաքովի ե/բ նոր դիտահորերի կափարիչների տեղադրում 1200x1200մմ/7հատ/	մ^3	2,02	24,2092	48,903
21	Շուկա	Հավաքովի ե/բ կափարիչի արժեքը 1200x1200, թուջե մտոցի հետ	հատ	7	88,3069	618,148
22	30-7	բետոնե ջրընդունիչ հոր 0,6*0,6*0,8/1*1*1	մ^3	0,70	56,4910	39,544
23	Շուկա	թուջե ցանցի տեղադրում ջրընդունիչների վրա 68x68սմ չափերի	հատ	1	74,6731	74,673
24	27-251 63-1	ֆրեզերված մակերեսի մաքրում,մշակում բիտումային մածիկով /0,6կգ 1 մ2-ու համար /8735մ2 /	տն	5,241	217,7083	1141,009
25	27-28	հարթեցնող ծակոտկեն ասֆալտաբետոնե շերտ 30մմ միջին հաստ	տն	157,00	31,1671	4893,239
26	27-164-2 27-165-2	«Բ» տիպի մանրահատիկ ա/բետոնե ծածկույթի իրականացում խճային հիմքի վրայից/հաստ.-50մմ	100մ^2	87,35	398,6675	34823,606
		Ընդամենը				**58276,167**
		Տեսակարար կշիռ				**33,460**
		Կահավորում				
1	27-180	ճանապարհային նշանների տեղադրում	հատ	62	22,6129	1402,002
2	1-961	բնահողի քանդում նշանների հիմքերի տակ	մ^3	5,2	3,5965	18,702
3	1-968	ավելորդ բնահողի բարձում ա/հնքնաթափին ձեռքով	մ^3	5,2	0,3745	1,947
4	Գ-130-3	ավելորդ բնահողի տեղափոխում ավտո-հնքնաթափով 3կմ հեռ.	տն	7,8	0,4790	3,736
5	6-2	բետոնե հիմքերի կառուցում հենասյան տակ B 15 մ.բ.	մ^3	5,2	46,2369	240,432
6	9-33	պողպատե խողովակների մոնտաժում/ Φ89x4,Φ57x4/	տն	1,106	29,6052	32,743
7	շուկա	պողպատե խողովակի արժեքը Φ89x4 մմ	մ	72,0	5,2363	377,015
8	շուկա	պողպատե խողովակի արժեքը Φ57x4 մմ	մ	96,0	2,7989	268,690
9	15-614	պողպատե խողովակի յուղաներկում 2 անգամ	100մ^2	0,38	16,2410	6,172
10	27-248	փողոցի երթևեկելի մասի գծանշում /ճանապարհի բաժանարար,0.1մ լայնությամբ որակյալ գծանշման ներկով 2 շերտ 42,5մ2/	1կմ	0,43	285,6333	122,822

11	27-247	ճանապարհային գծանշում 0.4մ լայնությամբ /որակյալ գծանշման ներկով 2 շերտ /74մ2/	1կմ	0,183	279,5375	51,155
		Ընդամենը				2525,417
		Տեսակարար կշիռ				1,450
		Ընդամենը				*174166,667*
		ԱԱՀ 20%				*34833,333*
		Ընդամենը				*209000,000*
		Տեսակարար կշիռ				*100*

* Կապալառուն աշխատանքները կատարում է ք. Արմավիր հասցեում:

Տեխնիկական բնութագրով պահանջվող լիցենզիաները, որակավորումները, սերտիֆիկատները անհրաժեշտ է ներկայացնել պայմանագրի գործողության շրջանակներում Պատվիրատուի կողմից նման հիմնավոր պահանջ ստանալու օրվանից հաշված 2 աշխատանքային օրվա ընթացքում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Արմավիրի համայնքապետարան
Ք. Արմավիր, Հանրապետության 32
ՀՀ Ֆինանսների նախարարություն
Հ/Հ՝ 900332371039
ՀՎՀՀ՝ 04401882
Համայնքի ղեկավար՝

Դ. Խուդաթյան----------
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ՇԻՆՊԼՅՈՒՍ» ՍՊԸ
Ք. Երևան, Աշտարակի խճ. 47/18
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 1570058941400100
ՀՎՀՀ՝ 00891777
Տնօրեն՝ Տ. Նազարյան

Տ. Նազարյան----------
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված թիվ 2
« 09 » Հուլիս 2021թ. կնքված
ԱՔ-ՀԲՄԱՇՁԲ-21/1 ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
ԱՐՄԱՎԻՐ ՔԱՂԱՔԻ ԱՐԱՐԱՏՅԱՆ ՓՈՂՈՑԻ, ԱԲՈՎՅԱՆ ՓՈՂՈՑԻ՝ ԱՐԱՐԱՏՅԱՆ ՓՈՂՈՑ-ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԻ ՀԱՏՎԱԾԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
1	Արմավիր քաղաքի Արարատյան փողոցի, Աբովյան փողոցի՝ Արարատյան փողոց-Հանրապետության հրապարակի հատվածի հիմնանորոգման աշխատանքներ	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից:	150 օրացուցային օր
ԸՆԴԱՄԵՆԸ			150 օրացուցային օր

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Արմավիրի համայնքապետարան
Ք. Արմավիր, Հանրապետության 32
ՀՀ Ֆինանսների նախարարություն
Հ/Հ՝ 900332371039
ՀՎՀՀ՝ 04401882
Համայնքի ղեկավար՝

Դ. Խուդաթյան----------
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ՇԻՆՊԼՅՈՒՍ» ՍՊԸ
Ք. Երևան, Աշտարակի խճ. 47/18
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 1570058941400100
ՀՎՀՀ՝ 00891777
Տնօրեն՝ Տ. Նազարյան

Տ. Նազարյան----------
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 3
« 09 » Հուլիս 2021թ. կնքված
ԱՔ-ՀԲՄԱՇՁԲ-21/1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45231187/501	Արմավիր քաղաքի Արարատյան փողոցի, Աբովյան փողոցի՝ Արարատյան փողոց-Հանրապետության հրապարակի հատվածի հիմնանորոգման աշխատանքներ													

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Արմավիրի համայնքապետարան
Ք. Արմավիր, Հանրապետության 32
ՀՀ Ֆինանսների նախարարություն
Հ/Հ՝ 900332371039
ՀՎՀՀ՝ 04401882
Համայնքի ղեկավար՝

Դ. Խուդաթյան----------
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ՇԻՆՊԼՅՈՒՍ» ՍՊԸ
Ք. Երևան, Աշտարակի խճ. 47/18
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 1570058941400100
ՀՎՀՀ՝ 00891777
Տնօրեն՝ Տ. Նազարյան

Տ. Նազարյան----------
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված թիվ 4
« 09 » Հուլիս 2021թ. կնքված
ԱՔ-ՀԲՄԱՇՁԲ-21/1 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
« 09 » Հուլիս 2021թ. կնքված
ԱՔ-ՀԲՄԱՇՁԲ-21/1 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____-ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն